

ԻՆՉ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՆԵՆԱ ՌՈՒՍ ԶԲՈՍԱՇՐՋԻԿՆԵՐԻ ՄԵԾ ՀՈՍՔԸ


ՀՀ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՎՐԱ

DOI: 10.52174/2579-2989_2022.2-55

Հիմնաբառեր. զբոսաշրջություն, պատերազմ, չվերթ, սահմանափակում, համավարակ

COVID-19 համավարակի հետևանքով ՀՀ զբոսաշրջության ոլորտն էական վնասներ կրեց: 2020 թ.-ին ՀՀ ներգնա զբոսաշրջային այցելությունների թիվը կազմել էր 360338՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 81%-ով: 2021 թ.-ին իրավիճակն աստիճանաբար շտկվեց, ինչի վկայությունն է այն, որ այդ ժամանակահատվածում ՀՀ է այցելել 870308 ներգնա զբոսաշրջիկ՝ նախորդ տարվա համեմատ 141%-ով ավելի: Աճեց նաև ներքին զբոսաշրջիկների թիվը՝ կազմելով 1595826 մարդ՝ 2020 թ.-ի համեմատ 52.6%-ով, 2019 թ.-ի համեմատ՝ 3%-ով ավելի:

2022 թ.-ի ռուս-ուկրաինական պատերազմի ժամանակահատվածում ռուսաստանցիների էական հոսք կա դեպի ՀՀ: Սա կարճաժամկետում կարող է դրականորեն ազդել մեր երկրի զբոսաշրջության ոլորտի վրա, մինչդեռ տնտեսության առումով, պատերազմի հետևանքները, անշուշտ, բացասական կլինեն: Ռուսաստանից ժամանածների շրջանում կատարված հարցումները վկայում են, որ նրանք հիմնականում գոհ են հայկական հյուրընկալությունից և դեռևս չեն որոշել՝ որքան ժամանակ կմնան այստեղ: Ուստի, նրանց համար հարկ է մշակել գրավիչ զբոսաշրջային փաթեթներ դեպի ՀՀ փորձեր դեստինացիաներ: ՀՀ-ն կարող է լինել նաև «շոփինգ» զբոսաշրջության երկիր ռուսաստանցիների համար, ինչպես նաև տարանցիկ զբոսաշրջության վայր: Դեռ շարժվա է հստակ կանխատեսումներ անել, թե 2022 թ.-ին որքան ռուս զբոսաշրջիկ կայցելի մեր երկիր. ամեն ինչ կախված է նրանից, թե պատերազմական իրավիճակը և դրա հետևանքով մյուս սահմանափակումներն ու պարտամիջոցները ինչքան երկար կշարունակվեն:



Գայանե ԹՈՎՄԱՍՅԱՆ


Տնտեսագիտության
թեկնածու, դոցենտ

2010 թ. գերազանցությամբ ավարտել է ՀՊՏՀ-ն՝ «Կառավարում» մասնագիտությամբ: 2014 թ. ստացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան, 2021 թ.՝ դոցենտի գիտական կոչում:

2016 թ.-ից ՀՊՏՀ «Ամբերդ» հեղափոխական կենտրոնի աշխատակից է:

2016 թ.-ից դասավանդում է ՀՀ ՊԿԱ-ում, 2019 թ.-ից՝ ՀՊՏՀ կառավարման ամբիոնում:

100-ից ավելի գիտական հրատարակումների, այդ թվում՝ վեց մենագրության և երեք ուսումնական ձեռնարկների հեղինակ և համահեղինակ է:

 ORCID - <https://orcid.org/0000-0002-4131-6322>

Web of Science ResearcherID:
AAH-5677-2021
Scopus Author ID: 56690085600

րան ձեռք բերել: Իհարկե, այս ամենի արդյունքում բարձրացել են նաև բնակարանների վարձավճարները: Օրինակ՝ Երևանի Կենտրոն վարչական շրջանում 2-3 սենյականոցների վարձավճարները տատանվում են 1000-6500 ԱՄՆ դոլարի սահմաններում: Քանի որ բնակարանները վարձակալվում են կարճաժամկետ՝ 1-2 ամսով, ուստի, ինչպես ընդունված է, դրանց վարձակալության գինը 20-30%-ով ավելի բարձր է լինում: Շատերն օգտվում են առիթից և արհեստականորեն էլ ավելի են բարձրացնում գները, ինչը վնասում է շուկային⁸:

Մարտի 21-ին, օրինակ, ըստ «Զվարթնոց» օդանավակայանի կայքի տվյալների, նախատեսված է եղել 15 թռիչք ՌԴ-ից, մարտի 20-ին՝ 18 թռիչք⁹:

Համաձայն նախնական փորձագիտական տվյալների՝ պատերազմի մեկնարկից ի վեր ՌԴ-ից ՀՀ է ժամանել մոտ 85000 մարդ, Ուկրաինայից՝ 4000, և պարզ չէ, թե նրանցից քանիսն են ՀՀ և քանիսը՝ ՌԴ կամ Ուկրաինայի քաղաքացի:

Երբ առկա լինեն 2022 թ.-ի եռամսյակային և տարեկան զբոսաշրջային այցելությունների տվյալները, սպասելի է, որ ՌԴ-ից ներգնա զբոսաշրջիկների թիվը շատ մեծ կլինի: Ավանդաբար, ՌԴ-ից դեպի ՀՀ եղել է զբոսաշրջիկների մեծ հոսք հատկապես գարնանային տոների ժամանակ, իսկ ձմռանն այցելել են ձմեռային զբոսաշրջության սիրահարները, ինչպես նաև մեծ թիվ են կազմել գինու զբոսաշրջության սիրահարները և այլն:

Այժմ, հաշվի առնելով այլ երկրների կողմից կիրառվող սահմանափակումները, ՀՀ-ն պետք է քայլեր ձեռնարկի երկարաժամկետում ռուս զբոսաշրջիկներին գրավելու ուղղությամբ: ՌԴ-ում փակվում են միջազգային ապրանքանիշների խանութները, ուստի, այս առումով, ՀՀ-ն կարող է դառնալ նաև «շոփինգ (shopping)» զբոսաշրջության երկիր ռուսաստանցիների համար: ՀՀ-ն կարող է դառնալ նաև տարանցիկ զբոսաշրջության երկիր, երբ ռուս զբոսաշրջիկներն այլ երկրներ մեկ-

նելու համար ուղիղ թռիչքների բացակայության դեպքում նախընտրեն մեկնել Երևանով:

Կարևոր է նաև այս ընթացքում Երևանի վրա ենթակառուցվածքային ճնշումը նվազեցնելու նպատակով դեպի մարզեր տուրեր կազմակերպելը ռուս զբոսաշրջիկների համար, ինչը կնպաստի մարզերի սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը:

ՌԴ-ից ժամանած զբոսաշրջիկների շրջանում իրականացրել ենք կարճ հարցում՝ պարզելու նրանց այցի նպատակն ու տևողությունը, գոհունակությունն ու դժգոհությունները: Հարցումը, որին մասնակցել է մոտ 100 ռուսաստանցի, կատարվել է Երևանի փողոցներում, հանրային սննդի և հյուրանոցային տնտեսության օբյեկտներում: Հարցման արդյունքում պարզ է դարձել, որ.

- ռուսաստանցիները շատ գոհ են հայկական հյուրընկալությունից, կերակուրներից, հանրային սննդի օբյեկտներում սպասարկման որակից, ինչպես նաև հայերի՝ իրենց օգտակար լինելու պատրաստակամությունից,
- մեծ մասը ՀՀ է ժամանել անորոշ ժամանակով՝ նշելով, որ դեռ կմնա այստեղ, կշրջի երկրի զբոսաշրջային դեստինացիաներով, մինչև որ իրավիճակը կայունանա և կարողանա վերադառնալ ՌԴ,
- որոշ մասը ՀՀ է ժամանել ընտանիքներով, ժամանակավոր բնակություն հաստատել վարձու բնակարաններում, աշխատում է ՀՀ-ից՝ հեռավար եղանակով (շատերը տարբեր միջազգային կազմակերպությունների կամ SS ոլորտի աշխատողներ են, որոնք կարող են աշխատել հեռավար և, գտնվելով ՀՀ-ում, ստանալ միջազգային դրամական փոխանցումներ տարբեր երկրներից),
- ընդհանուր առմամբ, նրանք դժգոհ չեն, դժգոհությունը որոշ դեպքերում վերաբերում է բնակարանների բարձր վարձավճարներին, ինչը, սակայն, իրենց մեկնաբանմամբ, պայմանավորված է

⁸ Հայ տանտերերն ու ռուս վարձակալները. Երևանում վարձով բնակարանների գները հասնում են մինչև 6.500 դոլարի, https://www.tert.am/am/news/2022/03/09/vardzakalutyun/3774765?fbclid=IwAR3pn950JFvK02ChxOJebEjIvRws_6mGCejaliMk-KV5wY8QrQcc6CtJS0c (վերջին մուտքը՝ 10.03.2022 թ.):

⁹ Զվարթնոց օդանավակայան, <http://www.zvartnots.aero/> (վերջին մուտքը՝ 21.03.2022 թ.):

հենց ՌԴ-ից ժամանումների արդյունքում պահանջարկի կտրուկ ավելացմամբ,

- նրանց կարծիքով՝ ապրանքների գները ՀՀ սուպերմարկետներում բարձր չէ, գրեթե նույնն է, ինչ իրենց երկրում:

Այսպիսով՝ կարելի է ասել, որ ռուսաստանցիները գոհ են ՀՀ-ից:

Բացի դրանից, զբոսաշրջային որոշ գործակալություններում իրականացրած մեր փորձագիտական հարցումները ցույց տվեցին, որ մեծացել է ռուսաստանցիների՝ դեպի ՀՀ տարբեր դեստինացիաներ զբոսաշրջային տուրերի նկատմամբ պահանջարկը, և այժմ շատ պահանջված են ռուսախոս զբոսավարները:

Համավարակի հետևանքով զբոսաշրջությունն էականորեն տուժել էր ՀՀ-ում, և այս առումով, ռուս զբոսաշրջիկների հոսքը կարող է դրական ազդեցություն ունենալ ոլորտի համար:


Ռուս զբոսաշրջիկների թվի նվազումը մի շարք երկրներում բացասաբար կանդորադառնա համաշխարհային զբոսաշրջության վերականգնման վրա:

Հարկ ենք համարում հակիրճ ներկայացնել նաև զբոսաշրջության ոլորտի առկա վիճակը և սպասվող հնարավոր աճը ՀՀ-ում: Նախ՝ նշենք, որ շարունակվող

համավարակի պայմաններում 2021 թ.-ին միջազգային զբոսաշրջիկների թիվն աշխարհում կազմել է շուրջ 415 միլիոն մարդ (2020 թ.-ին՝ 381 միլիոն), ինչը 2019 թ.-ի ցուցանիշից դեռևս ցածր է 72%-ով: Ըստ նախնական տվյալների՝ միջազգային զբոսաշրջության արտահանումից եկամուտները 2021 թ.-ին կազմել են 700 մլրդ ԱՄՆ դոլար¹⁰:

2021 թ.-ին ՀՀ-ում նույնպես նկատվեց զբոսաշրջության ոլորտի ակտիվացում: Եթե 2020 թ.-ին ՀՀ ներգնա զբոսաշրջային այցելությունների քանակը 360338 էր՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 81%-ով, ապա 2021 թ.-ին ՀՀ է այցելել 870308 ներգնա զբոսաշրջիկ՝ նախորդ տարվա համեմատ 141%-ով ավելի (գծապատկեր 1)¹¹: Իհարկե, այս ցուցանիշը դեռ շատ հեռու է 2019 թ.-ին արձանագրվածից (1894377 ներգնա զբոսաշրջիկ), սակայն, հաշվի առնելով այդ ընթացքում ամբողջ աշխարհում շարունակվող համավարակը, նոր շտամների ի հայտ գալը, տարբեր երկրների կողմից պարբերաբար կիրառվող սահմանափակումները, կարելի է ասել, որ նշված տվյալները դրական ազդակ են ոլորտի աստիճանական վերականգնման համար:

Այժմ դիտարկենք 2020-2021 թթ. զբո-



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1



ՀՀ ներգնա և արտագնա զբոսաշրջիկների թիվը, 2010-2021 թթ.⁵

¹⁰ Tourism grows 4% in 2021 but remains far below pre-pandemic levels, <https://www.unwto.org/news/tourism-grows-4-in-2021-but-remains-far-below-pre-pandemic-levels> (վերջին մուտքը՝ 10.03.2022 թ.):
¹¹ ՀՀ-սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թ. հունվար-դեկտեմբերին, էջ 150, https://armstat.am/file/article/sv_12_21a_421.pdf (վերջին մուտքը՝ 10.03.2022 թ.):
¹² Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի վիճակագրական տվյալների բազաներ, Միջազգային զբոսաշրջություն, <https://www.armstat.am/am/?nid=14> (վերջին մուտքը՝ 10.03.2022 թ.):

ԱՂՅՈՒՍԱԿ 1

«Ներգնա և արտագնա զբոսաշրջիկների քանակը 2020-2021 թթ.՝ ըստ եռամսյակների, մարդ»¹³

Քանակ / տարի	2020 Եռ. 1	2020 Եռ. 2	2020 Եռ. 3	2020 Եռ. 4	2021 Եռ. 1	2021 Եռ. 2	2021 Եռ. 3	2021 Եռ. 4
Ժամանել են ուղևորներ, որոնք, ըստ ՉՀԿ մեթոդաբանության, համարվում են զբոսաշրջիկ	307590	-	16471	36277	86524	152739	370512	260533
Մեկնել են ուղևորներ, որոնք, ըստ ՉՀԿ մեթոդաբանության, համարվում են զբոսաշրջիկ	274435	-	10511	16380	44574	70972	174490	133344

սաշրջային այցելություններն ըստ եռամսյակների (աղյուսակ 1):

2020 թ. առաջին եռամսյակում ներգնա զբոսաշրջային այցելությունները կազմել են 307590՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազելով 15.6%-ով, ապրիլ-հունիսին և հուլիս-օգոստոսին, ՀՀ կառավարության 2020 թ. մարտի 16-ի N 298-Ն որոշման¹⁴ կատարմամբ պայմանավորված, ՀՀ ներգնա զբոսաշրջային այցելություններ չեն արձանագրվել, սեպտեմբերին գրանցվել է 16471, իսկ չորրորդ եռամսյակում՝ 36277 զբոսաշրջային այցելություն¹⁵: Փաստորեն, 2020 թ.-ին 2019 թ.-ի համեմատ գրանցվել է 1534039-ով պակաս այցելություն:

Ըստ ՍԷԿՏ-ով ստացված տվյալների՝

2021 թ. առաջին եռամսյակում ՀՀ է այցելել 86524 ներգնա զբոսաշրջիկ¹⁶, երկրորդ եռամսյակում՝ 152739¹⁷, երրորդ եռամսյակում՝ 370512¹⁸, չորրորդ եռամսյակում՝ 260533¹⁹:

2020 թ.-ին ՀՀ զբոսաշրջային ծառայությունների արտահանման ծավալը կազմել է 292,4 մլն ԱՄՆ դոլար, ինչը նախորդ տարվա համեմատ պակաս է 1242.5 մլն ԱՄՆ դոլարով (2019 թ.՝ 1534.9 մլն ԱՄՆ դոլար): 2021 թ. առաջին երեք եռամսյակներում զբոսաշրջային ծառայությունների արտահանման ծավալը կազմել է շուրջ 500 մլն ԱՄՆ դոլար (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ շուրջ 251 մլն ԱՄՆ դոլարով ավելի) (աղյուսակ 2)²¹:

ԱՂՅՈՒՍԱԿ 2

«Հ վճարային հաշվեկշռի որոշ ցուցանիշներ, 2020-2021 թթ., մլն ԱՄՆ դոլար»¹⁴

Ցուցանիշ	2020 Եռ.1	2020 Եռ.2	2020 Եռ.3	2020 Եռ.4	2020	2021 Եռ.1	2021 Եռ.2	2021 Եռ.3
Ճանապարհորդության և մարդատար տրանսպորտի մեջ զբոսաշրջության հետ կապված ծառայություններ	20.8	-2.6	-0.3	-7.2	10.7	26.6	62.3	155.1
կրեդիտ	227.3	4.8	16.1	44.2	292.4	65.9	123.5	310.3
դեբետ	206.6	7.4	16.4	51.4	281.7	39.2	61.2	155.2

¹³ ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակի մասին եռամսյակային հրապարակումներ, 2018-2021 թթ., աղբյուրը՝ <https://www.armstat.am> (վերջին մուտքը՝ 10.03.2022 թ.):

¹⁴ ՀՀՊՏ 2020.03.16/ հատուկ թողարկում 257.5, ՀՀ կառավարության որոշումը ՀՀ-ում արտակարգ դրություն հայտարարելու մասին, 16-ը մարտի, 2020 թ. N 298-Ն որոշում, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=140212> (վերջին մուտքը՝ 10.03.2022 թ.):

¹⁵ Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի վիճակագրական տվյալների բազաներ, Միջազգային զբոսաշրջություն, <https://www.armstat.am/am/?nid=14> (վերջին մուտքը՝ 10.03.2022 թ.):

¹⁶ ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թ. հունվար-ապրիլին, https://www.armstat.am/file/article/sv_04_21a_421.pdf (վերջին մուտքը՝ 10.03.2022 թ.):

¹⁷ Նույն տեղում:

¹⁸ Նույն տեղում:

¹⁹ Նույն տեղում, էջ 150:

²⁰ ՀՀ վճարային հաշվեկշիռ, Արտաքին հատվածի վիճակագրություն, <https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx> (վերջին մուտքը՝ 10.03.2022 թ.):

Դիտարկելով զբոսաշրջային այցերի ցուցանիշներն ըստ նպատակի (աղյուսակ 3)²¹ կարելի է ասել, որ Հայաստան հիմնականում այցելում են հանգստի և ժամանցի, ապա գործնական նպատակով: Տվյալներն արտացոլում են միայն հյուրանոցային տնտեսության օբյեկտներում (հյուրանոցներ, հյուրանոցատիպ հանգրվաններ, առողջարաններ, հանգստյան տներ և այլն) հաշվառված զբոսաշրջիկներին:

2020 թ.-ին Հայաստան ժամանող զբոսաշրջիկների 27%-ն է (97550 զբոսաշրջիկ) հանգրվանել հյուրանոցային տնտեսության օբյեկտներում, 2021 թ.-ին՝ 32%-ը (278393 զբոսաշրջիկ):

Վերջին տարիներին ՀՀ այցելած ներգնա զբոսաշրջիկները հիմնականում ՌԴ-ից, Գերմանիայից, Ֆրանսիայից, ԱՄՆ-ից, Իրանից են (աղյուսակ 4): 2020 և 2021 թթ.-ին աճել է ՌԴ-ն ներկայացնող զբոսաշրջիկների մասնաբաժինը:

Վերջին տարիներին աճում էր նաև ՀՀ ներքին զբոսաշրջիկների թիվը: 2019 թ.-ին դա կազմել է 1544600 մարդ՝ նախորդ տարվա համեմատ ավելանալով 41.4%-ով: Ներքին զբոսաշրջիկների մեծ մասի նպատակը եղել է հանգիստը և ժամանցը (72%): 2020 թ.-ին, համավարակով պայմանավորված, ներքին զբոսաշրջիկների քանակը

կը նախորդ տարվա համեմատ նվազել է մոտ 33%-ով՝ կազմելով 1045756 մարդ: Նրանց շուրջ 73%-ի նպատակը եղել է հանգիստն ու ժամանցը:

2021 թ.-ին ներքին զբոսաշրջիկների թիվը կազմել է 1595826 մարդ՝ 2020 թ.-ի համեմատ աճելով 52.6%-ով, 2019 թ.-ի համեմատ՝ 3%-ով: Զբոսաշրջիկների 77%-ի նպատակը եղել է հանգիստը և ժամանցը:

Համավարակի, ճանապարհորդության միջազգային սահմանափակումների պարագայում շատերը գերադասել են հանգրստանալ ՀՀ զբոսաշրջային դեստինացիաներում: 2022 թ. գուցե կրկին լինեն միջազգային տեղաշարժման սահմանափակումներ, շատ երկրներ դեռ զբոսաշրջիկներ են ընդունում միայն պատվաստված լինելը հավաստող սերտիֆիկատի պարագայում, ուստի, կարելի է ակնկալել ՀՀ ներքին զբոսաշրջության ակտիվացում 2022 թ.-ին ևս:

Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների՝ կացության և հանրային սննդի կազմակերպման ծառայությունների ծավալը 2021 թ. հունվար-դեկտեմբերին կազմել է 182107.8 մլն դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 68.2%-ով, մեծացել է նաև զբոսաշրջային գործակալությունների գործունեության ծավալը:

Այսպիսով՝ կարելի է ասել, որ 2021 թ.-ի

ԱՂՅՈՒՍԱԿ 3

ՀՀ ներգնա զբոսաշրջային այցերն ըստ նպատակի, 2017-2021 թթ.²²

Քանակ / փարի	2017	2018	2019	2020	2021
ՀՀ ներգնա զբոսաշրջիկներ	1494779	1651782	1894377	360338	870308
ՀՏՕ-ներում հանգրվանած ներգնա զբոսաշրջիկներ	264702	307473	550289	97550	278393
<i>որոնցից ըստ նպատակի¹</i>	100%	100%	100%	100%	100%
գործնական	23.9 %	27.3 %	15.9 %	15.8%	25.8%
հանգստի և ժամանցի	52.8 %	48.8 %	55.4 %	50.3%	52.3%
բուժման	0.2 %	1.4 %	0.5 %	0.4%	0.5%
այլ	23.1 %	22.5 %	28.2 %	33.5%	21.4%

²¹ TՀՀ վճարային հաշվեկշիռ, Արտաքին հատվածի վիճակագրություն, <https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx> (վերջին մուտքը՝ 10.03.2022 թ.):

²² ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2019 թ. հունվարին, էջ 105, https://www.armstat.am/file/article/sv_01_19a_421.pdf (վերջին մուտքը՝ 10.03.2022 թ.):

ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2020 թ. հունվարին, էջ 112-113, https://www.armstat.am/file/article/sv_01_20a_421.pdf (վերջին մուտքը՝ 10.03.2022 թ.):

ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թ. հունվարին, էջ 113-114, https://www.armstat.am/file/article/sv_01_21a_421.pdf (վերջին մուտքը՝ 10.03.2022 թ.):

ՀՀ-սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թ. հունվար-դեկտեմբերին, էջ 150, https://armstat.am/file/article/sv_12_21a_421.pdf (վերջին մուտքը՝ 10.03.2022 թ.):

ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2022 թ. հունվարին, էջ 113, https://www.armstat.am/file/article/sv_01_22a_421.pdf (վերջին մուտքը՝ 10.03.2022 թ.):

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Աերոֆլոտը» մարտի 8-ից ժամանակավորապես դադարեցնում է միջազգային բոլոր չվերթները, <https://armeniasputnik.am/20220305/aerovfl-voty-marti-8-ic-zhamanakavvorapes-dadarec-num-e-mijazgajin-bvolvor-chvertery-39426975.html>
2. «Աերոֆլոտը» կվերսկսի չվերթները դեպի Երևան և Բաքու, <https://news.am/arm/news/691465.html>
3. Զվարթնոց օդանավակայան, <http://www.zvartnots.aero>
4. Թուրքիան, Եգիպտոսը և Թունիսը հաստատել են ռուս զբոսաշրջիկներին ընդունելու իրենց պատրաստակամությունը, <https://nor.ge/am/?p=76022>
5. Հայ տանտերերն ու ռուս վարձակալները. Երևանում վարձով բնակարանների գները հասնում են մինչև 6.500 դոլարի, https://www.tert.am/am/news/2022/03/09/vardzakalutyun/3774765?fbclid=IwAR3pn950JFVk-02Chx0JebREjIvRws_6mGCejaliMkKV5wY8QrQc-c6CtJ5Oc
6. ՀՀՊՏ 2020.03.16/ հատուկ թողարկում 257.5, ՀՀ կառավարության որոշումը ՀՀ-ում արտակարգ դրություն հայտարարելու մասին, 16-ը մարտի, 2020 թ., N 298-Ն որոշում, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=140212>
7. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակի մասին եռամսյակային հրապարակումներ, 2018-2021 թթ., աղբյուրը՝ <https://www.armstat.am>
8. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2018 թ. հունվար-հոկտեմբերին, https://www.-armstat.am/file/article/sv_10_18a_432.pdf
9. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2018 թ. հունվարին, https://www.armstat.am/-file/article/sv_01_18a_422.pdf
10. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2019 թ. հունվարին, https://www.armstat.am/file/article/sv_01_19a_421.pdf, https://www.armstat.am/file/article/sv_01_19a_422.pdf
11. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2020 թ. հունվարին, https://www.armstat.am/file/article/sv_01_20a_421.pdf, https://www.armstat.am/file/article/sv_01_20a_422.pdf
12. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2020 թ. հունվար-դեկտեմբերին, https://armstat.am/file/article/sv_12_20a_126.pdf
13. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թ. հունվարին, https://www.armstat.am/file/article/sv_01_21a_421.pdf, https://www.armstat.am/file/article/sv_01_21a_422.pdf
14. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թ. հունվար-ապրիլին, https://www.armstat.am/file/article/sv_04_21a_421.pdf
15. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թ. հունվար-հունիսին, https://www.armstat.am/file/article/sv_06_21a_421.pdf
16. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թ. հունվար-սեպտեմբերին, https://www.armstat.am/file/article/sv_09_21a_421.pdf
17. ՀՀ-սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թ. հունվար-դեկտեմբերին, https://armstat.am/file/article/sv_12_21a_421.pdf, https://armstat.am/file/article/sv_12_21a_126.pdf
18. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2022 թ. հունվարին, https://www.armstat.am/file/article/sv_01_22a_421.pdf, https://www.armstat.am/file/article/sv_01_22a_422.pdf
19. ՀՀ վիճակագրական կոմիտեի վիճակագրական տվյալների բազաներ, Միջազգային զբոսաշրջություն, <https://www.armstat.am/am/?nid=14>
20. ՀՀ վճարային հաշվեկշիռ, արտաքին հատվածի վիճակագրություն, <https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx>
21. Ռուսաստանի օդային տարածքը փակ է 36 երկրի համար, <https://www.aysor.am/am/news/2022/02/28/%D5%8C%D5%B8%D6%82%D5%BD%D5%A1%D5%B-D%D5%BF%D5%A1%D5%B6-%D6%85%D5%A4%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6-%D5%B-F%D5%A1%D6%80%D5%A1%D5%AE%D6%84/1934453>
22. «Ուրալյան ավիաուղիներ»-ը մինչև մարտի վերջ դադարեցնում է թռիչքները դեպի Հայաստան, <https://b24.am/economy/310564.html>
23. 400 հազար դրամ՝ Մոսկվա-Երևան չվերթի տոմսի համար. ինչո՞ւ են կտրուկ թանկացել ավիատոմսերը, <https://news.am/arm/videos/52241.html>
24. Tourism grows 4% in 2021 but remains far below pre-pandemic levels, <https://www.unwto.org/news/tourism-grows-4-in-2021-but-remains-far-below-pre-pandemic-levels>

Гаяне ТОВМАСЯН

*Старший исследователь исследовательского центра «Амберд», АГЭУ,
кандидат экономических наук, доцент*

КАКОЕ ВЛИЯНИЕ БОЛЬШОЙ ПОТОК РОССИЙСКИХ ТУРИСТОВ БУДЕТ ИМЕТЬ НА ВОССТАНОВЛЕНИЕ АРМЯНСКОГО ТУРИЗМА?

Из-за пандемии COVID-19 туристический сектор Армении понес значительные потери. В 2020 году количество въездных туристических визитов в Армению составило 360338, что на 81% меньше, чем в предыдущем году. В 2021 году туристическая отрасль начала постепенно восстанавливаться. В 2021 году Армению посетило 870308 туристов, что на 141% больше, чем в предыдущем году. Количество внутренних туристов также увеличилось до 1595826 человек в 2021 году, увеличившись на 52,6% по сравнению с 2020 годом и на 3% по сравнению с 2019 годом.

В 2022 году наблюдается значительный приток россиян в Армению во время русско-украинской войны. Это может оказать положительное влияние на туристический сектор в краткосрочной перспективе, но война будет иметь негативные последствия для экономики Армении. Опросы, проведенные среди приехавших из России, показывают, что в основном они довольны армянским гостеприимством, и точно не знают, как долго пробудут здесь. Необходимо разработать привлекательные для россиян туристические пакеты по разным направлениям в Армении. Армения может быть как страной «шопинг» туризма для россиян, так и направлением транзитного туризма. Пока рано делать четкие прогнозы о том, каким будет поток российских туристов в Армению в 2022 году, так как все зависит от продолжительности войны и, следовательно, как долго будут продолжаться другие ограничения и санкции против россиян.

Ключевые слова: *туризм, война, рейс, ограничение, пандемия*

Gayane TOVMASYAN

*Senior Researcher at «Amberd» Research Center, ASUE,
PhD in Economics, Associate Professor*

WHAT IMPACT WILL THE GREAT FLOW OF RUSSIAN TOURISTS HAVE ON THE RESTORATION OF ARMENIAN TOURISM?

Due to the COVID-19 pandemic, tourism sector had significant losses in Armenia. In 2020 the number of incoming tourist visits to Armenia was 360338, decreasing by 81% compared to the previous year. In 2021 the tourism industry began to recover gradually. 870308 incoming tourists visited Armenia in 2021, increasing by 141% compared to the previous year. The number of domestic tourists also increased to 1595826 people in 2021, increasing by 52.6% compared to 2020, and by 3% compared to 2019.

In 2022 there is a significant flow of Russians to Armenia during the Russian-Ukrainian war. This may have a positive impact on the tourism sector in the short term, but the war will have its negative consequences on the Armenian economy. A survey conducted among those who came from Russia shows that they are generally satisfied with Armenian hospitality, and they do not know exactly how long they will stay here. It is necessary to develop attractive tourist packages to different destinations in Armenia for Russians. Armenia can be a "shopping" tourism country for Russians, as well as a transit tourism destination. It is too early to make clear predictions about how much the flow of Russian tourists to Armenia will be in 2022, as it all depends on the state of war and, consequently, how long the other restrictions and sanctions against the Russians will continue.

Keywords: *tourism, war, flight, restriction, pandemic*